




ՀԱՅԻՐԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԲ ՁԱԳՌԱՄԵՍ

ԿՐԾԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



21

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌՎՄ

1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին փեցանետայի բաժանորդագիրն է մեկ մեծիս անոնց համար որ ի Կ. Պոլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու համար՝ Չորս (4) փրակ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս փոխադրուի, ծառայն ու ձեռք, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանի փերցնախնայիս պիտի ճշդուին: — Մեկ քիւր՝ մեկ դանեկան է:

2. Արձագանգը կը հրատարակուի Եաքաք օրերը:

3. Խմբագրութիւնս պատրաստուեալ չէ անպատճառ կամ նոյնութեանք հրատարակելու իրեն դրկուած ո՛ր եւ է յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

7. Ծանուցիւնաց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



Սրտաբեղինք որ զբնաւած լիւերն բաժանորդներէ ոմանց յետը կանոնադրապէս ղեն հասնէր. իւրերբեմ որ բաժանորդ հասնէ ծանուցանել ճշդեւ որպէսզի դաճեալ դուր-կուին իրենց պահած լիւերն:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՔԱՔԱՐՅԵՐԹ


ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Առաջին Տարի

11 Հոկտեմբեր 1911

Թիւ 21.

ՊՕՍԻԻԷԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԸ



Անցեալ Հոկտ. 30ին կատարուեցաւ մեծին Պօսիւէի նոր Յիշատա-
կարանին բացման հանդէսը, առթիւ 230- տարեդարձի իւր Եպիսկոպո-
սոսեան՝ Գաղղիոյ Մոյ (Meaux) քաղքին վրայ, և 240-ին իւր մուտքին
Անմահներու Կաճառին մէջ: Այն հսկայական Հանճարը որ ճառագայթեց
Ժի. դարուն մէջ և պարծանք հանդիսացաւ Կաթողիկէ սուրբ Կրօնքի և
իւր հայրենեաց, այն սրբաւէր Եպիսկոպոսը, հրահոսան ճարտապօնը,
հարիւրաւոր հատորներու անխնշ և նրբամիտ երկնասլաց հեղինակը, այն
անգուգական վսեմ Միտքը զոր անուանեցին « Արծիւ Մոյի » (l'Aigle de
Meaux), չքեղապէս փառաւորուեցաւ իւր Աթոռանիստ սիրելի քաղաքին
մէջ:

Ողբացեալն Պրիւնըթիէն, Թագաւոր արդի քննադատներս, աշխարհահռչակ մատենագիր և աշխարհիս խոնջեցնող և չգոհացնող մտաւորական Թափառումներէն՝ խորին համազմամբ Եկեղեցւոյ գիրկը՝ ուր միտք կը հանգչին և սիրտը կ'երջանկանայ, դարձող ազնիւն Պրիւնըթիէն, 1898ին անդիմադրելի շատագովականով Պօսիւէի յիշատակին շուրջը զարթուցած էր համակրութեանց շարժում մը. ան ասեմ Մասնախումբ մը կազմուեցաւ՝ գաղղիական մտքի մշակութեան ամենէն հոյակապ ներկայացուցիչներէն, յիշատակարանի մեծարանքը մատուցանելու համար Պօսիւէի: Ամէն կողմանէ առատ առատ վազող նուէրներն թոյլ տուին գաղափարը արագ արագ իրագործելու: Հռչակաւոր քանդակագործն Տիւպուս մարմարինի մէջ կը գրուէր հիասքանչ գաղափար մը: Մայր եկեղեցւոյ միջավայրին ձախ սիւնաքաւանքին վարի կողմը կը բարձրանայ Յիշատակարանը, մեծվայելուչ և ազդեցիկ: Կանգուն կեցած է Պօսիւէ, եպիսկոպոսական զարդերով, ներշնչումի վայրկեանի մը մէջ, բիրտ ու բազուկը երկինք վերցուցած, ճարտարախօսութեան թափով խօսելու պահուն, անդիմադրելի և քաղցր, խանդավառ և անկեղծ: Յիշատակարանին խարսխին վրայ, հսկայական արծիւի թևերուն տակ կը կենան դէմքերն գլխաւոր Դիւցազանց և դիւցազնուհեաց, զորս իւր ճառերուն մէջ անմահացուց նա. Գօնաէ Իշխանը, Անգղիոյ Հանրիէթը, Աննա տը Կոնգակ, ևն:

Յուլիս ամսուան մէջ Սրբազան Քահանայապետը Կարդինալ Մէրիտէլ Վալի միջոցաւ գեղեցիկ նամակ մը գրած էր առ Արհի. Եպ.ն Մարպոյ, Վիճակաւոր Մոյի. գովելով այս ձեռնարկը. հոս կ'ուզենք յառաջ բերել զայն, ի պարծանս յիշատակի Պօսիւէի:

« Արհի. Տէր. — Մեր Սրբազան Հայրը Պիոս Բնյատ. Ժ. որտա՛գինս կը ծափահարէ ողնիւ ծրագրին զոր յղացաք հանդիսաւորապէս բանալու այն Յիշատակարանը որ կանգնուեցաւ Մոյ Քաղաքին Աթոռանիստ Եկեղեցւոյն մէջ՝ գեոտհռչակ յիշատակին Պօսիւէի, շնորհիւ բարեպաշտ նախաձեռնութեան Արհի. Պրիէ Եպ. ի և Գաղղիոյ և ուրիշ ազգերու Կաթողիկէից առատաձեռն օժանդակութեան: »

« Նորին Սրբութիւնը մեծապէս կը ցնծայ՝ տեսնելով վերջնական պսակումը այն ձեռնարկին զոր գովաբանած ու խրախուսած էր Մայրագոյն Քահանայապետն Լեոն ԺԳ., իւր առ Կարդինալ Բէրրոյ գրած նամակին մէջ, ի և Դեկտեմբերի 1898 տարուան: Իւր երջանկայիշատակ Նախորդին հետ ի միտին, Սրբազան Հայրը կը հրճուի այն մեծարանաց համար որ պիտի մատուցուին Մեծ Եպիսկոպոսին որ որժանացաւ կոչուել « Ար-

ծիւ Մոյի », և որու քրիստոնեայ Հանճարը փառքն եղաւ Գաղղիոյ, Եկեղեցւոյ, և կրնայ ըսուիլ, բովանդակ մարդկութեան :

« Զեր Արհի. Տէրութիւնը շատ իրաւամբ կ'ուզէ կոչել մօտաւոր հանգէսին, Գաղղիոյ կաթողիկէից հետ, նաեւ Եպիսկոպոսներն ու գիտնական Մարմինները. անոնց իւրաքանչիւրը իրենց սեպհական տեղը գրաւած պիտի ըլլան այս Մեծ Քահանային աճիւնին շուրջը, որ եղաւ եռանդուն Հովիւ իր ժողովրդեան, և միանգամայն պարծանք հանդիսացաւ քրիստոնէական մատենագրութեան : Անոնց իւրաքանչիւրը արդիւնաւոր կերպով պիտի խորհրդածեն վարդապետութիւններն անոր՝ որ, իւր խօսքին անհամեմատ ճարտասանութեամբ՝ Նախախնամութեան մեծ եւ անեղ դասերը ուղիարհիւ կարողներուն յիշեցնելէ վերջ, գիտէր պզտիկ ըլլալ պզտիկներու հետ, քրիստոնէական վարդապետութեան տարերքը սորվեցնելու համար խոնարհներուն և աղքատներուն, և ճշմարտութեան հացը բաշխելու համար ամենուն :

« Այս Յիշատակարանին ոտից առջև՝ հաւատացեալք և հովիւք պիտի ուսանին սիրել Եկեղեցւոյ աստուածային ճշմարտութիւնն ու իր Նուիրապետութիւնը : Հաւատոյ մասանց ջատագովները պիտի յիշեն անյաղթելի սպացոյցներն անմահ գործոց այս Վարդապետին, որ իր ոյժերն ու կեանքը սպառեց ի պաշտպանութիւն Կաթողիկէ վարդապետութեան : Նոյն իսկ անհաւատները պիտի չկարենան զերծ մնալ փրկարար սրտայուզմունքէ մը՝ այս հանճարին հանդէպ, որ մարդկային բանականութիւնը բարձրացուց իւր ամենավսեմ կատարելութեան, և որ համոզուած էր որ իւր մտաց փանմութիւնը միշտ աւելի պիտի բարձրանար, բոլորով սրտիւ հաճելով հաւանելով Հաւատոյ սկզբունքներուն և աստուածային պատուիրաններուն :

« Կանխաւ, այն ամենուն որոնք Զեր կոչին և հրաւերին վրայ մօտնակից պիտի ըլլան այս տօնախմբութեան, կղերականներուն և Եպիսկոպոսներուն, գիտութեանց ու դպրութեանց ներկայացուցիչներուն, Սրբազան Քահանայապետը յօժարակամ կը ջնորհէ՝ ինչպէս նաեւ Զեր Արհի. Տէրութեան ու Զեր Թեմականներուն, իւր Առաքելական Օրհնութիւնը :

« Երջանիկ եւ այս պատեհ առիթէն օգտուելով կրկնելու Զեր Արհի. Տէրութեան իմ կատարեալ անձնանուիրութեան հաւատարմքն ի Տէր .

8 Յուլիս 1911 .

Ռ. Կարդ. Մերի սեղ Վալ

Հանգէսին օրը Մոյ քաղաքը կ'արթննար ամենափայլուն արեւու մը

տակ . և արդէն անթիւ ճամբաներէն կը հասնէին խումբ խումբ տղայեւ-
ներ , և անհամար բազմութիւն մը կը լեցնէր Պօսիւէին սոստանը : Այս ել-
ևելք ցոյց կուտայ մեծ Եպիսկոպոսին փառքը :

Հասած էին Կարդինալներ , յորս էր և Պէլճիքայի Նախագահ Ար-
քեպ . Կարդ . Մէրսիէ . բազմութիւն Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց
և եկեղեցական ուրիշ բարձրաստիճան անձնաւորութեանց :

Գաղղիոյ Կաճառն (Académie) ներկայացուցիչներ ղրկած էր , որոնց
մէջ էին՝ Ժիւլ Լըմէթը , Ալֆրէտ Մէզիէր , Մարքի տը Վօկիւէ , Զօրավար
Լանկլուա , Հանրի Լալըտան , Գօնթ տ'Օսօնվիլ , և այլք :

Ժամը 10ին պատարագը տեղի ունեցաւ : Մոյլ Եպ . Գեր . Մարպոյ ,
Պօսիւէի ամպիրոնէն կարդաց Լեոն ԺԳ . ի և Պիոս Ժ . ի նամակները որոնց
մեծարալից լուծեամբ ունկնդրեց բազմութիւնը :

Արարողութենէն վերջը գնացին Թիէռ քարափին վրայի մեծ Սրահը ,
լսելու համար երեւելի ճառ մը :

(Շարունակելի)

ՔԱՀԱՆԱՔԱՓՅՏԻ ԱՆՍԻՍՏԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՆԵԱՐԳՈՒԹԻՒՆ

« ՃՇՄԱՐԻՏ ԿԱԹՈՂԻԿԷ » ի

պատասխան մը

Երբ մարդ գիրք մը կարդայ կամ գայն աչքէ անցնէ միայն սխալ
կամ անճշդութիւն գտնելու դիտմամբ և ուզէ խծրծել անոր բովանդա-
կութիւնը՝ խնայողական և երգիծանելու , մարմաջով անշուշտ չխնայիր ո՛չ
անոր նիւթի ծանրութեան , և ոչ պարագայից փափկութեան , յորում ճշ-
մարիտ կաթողիկէներու գաղափարակցութիւն , անկեղծ միաբանութիւն կա-
րեոր է : « Ճշմարիտ կաթողիկէ » ն ալ ենթագրելով մէկտեղ որ ազգային
ըսուած կանոնադրութեան ծրագրի վրայ՝ անցեալ ամիսները հրատարա-
կուած « տետրիս » ը կրնայ պաշտօնական եղած ըլլալ » թէ՛ ղրկուած
վայրէն և թէ լեզուին կամ ոճին ձեւէն » , ինչպէս կ'ըսէ ինքը , յիշեալ
տետրի էջ 19, տող 30ի մէկ պարբերութեան առջև կը գայթակղի , որով-
հետեւ հոն Հռովմայ Սրբազան Քահանայապետի անսխալականութիւնը՝ ի
հաւատոյս , ի բարոյս եւ ի բարեկարգականս տարածուած է , երբ նոյն Գե-
րագոյն Հօտապետը այս նիւթիւն մէջ յԱԹՈՒՌՈՅ խօսի : Ճշմարիտ կա-

թողիկէի խիզճը տալն ու վրայ կ'ըլլայ, և հեգնական ապրիքով մը հեղինակաց, զորս քանի մը աստուածաբան վարդապետներ կ'ենթադրէ. անագին աստուածաբանական մոլորութիւն և հերիքակութիւն կ'անուանէ այդ նախադասութիւնը: Մենք հեգնութիւն ու երգիծանք մէկդի զնկով կ'արժէ որ համառօտ բացատրութիւն մը տանք զայրակեցուցիչ նախադասութեան, երեւան հանելով անոր ճշդութիւնը և մեր ներկայ պարագայից մէջ զայն այդպէս մեկին ու բացորոշ կերպով հրապարակ հանելու պէտքը:

Այս լպւ ըմբռնելու համար հարկ է քանի մը գիտելիք աչքի պոչն ունենալք և առաջին թէ ինչ ըսել է յԱթոռոյ խօսիլ: Քահանայապետը յԱթոռոյ կը խօսի երբ ա) կը խօսի իբրև Գրախ, Պէս ու Գերագոյն Դէս Եկեղեցւոյ. բ) Կը խօսի վճռելով զսահմանելով, վերջ տալով վէճերու և տարաձայնութեանց. գ) Երբ՝ թէպէտ և մասնաւոր պարագայի մը մէջ խօսի և առանձնականի մը միայն ուղղէ իր վճիռը, սակայն նախընթաց երկու պայմաններով խօսի. որ ատեն Անոր վճիռը պէտք է ընդունելի ըլլայ ընդհանուր Եկեղեցւոյ, ուստի անսխալականութեան պայմանն չէ առ ընդհանուր Եկեղեցի խօսիլն ու գրելն: դ) Վերջապէս երբ կը վճռէ հաւատքի ու բարոյից խնդիրներ:

Այս վերջին պայմանին մասին կարեւոր է երկրորդ գիտելիք մ'ալ, առանց որոյ կարելի չէ ճշդել ամէն թիւրիմացութիւն: — Վատիկանեան ժողովոյ նիւթական բաւերն հաւատքի և բարոյից սահմաններու մէջ կը փակեն անսխալականութեան տարածութիւնը, և այս ստույգ է. բայց հաւատք և բարք ըսելով ինչ հասկնալու է: Հոս է խնդրոյն հոգին: Անսխալականութեան վարդապետութեան տկնարկելով՝ Վատիկանեան ժողովոյ բաւառացի ընդօրինակութիւն մը չէր որ ներկայացուցած էր Տեսութեան հեղինակը, այլ անոր մեկնութիւնը, մեկնութիւն մը որ մեր պարագաներուն կարեւոր է և ամէն ճշմարիտ կաթողիկէ ընդունելու և պինդ բռնելու է: Մեր ըսածին իմաստն է (և այս անհերքելի ճշմարտութիւն մի է ամէն ճշմարիտ կաթողիկէից) թէ հաւատքի և բարոյից նիւթերու կարգէն է նաև այն քարեկարգականը, յորում Ս. Քահանայապետն յԱթոռոյ կը խօսի, որ ըսել է անսխալականութիւնը կապտուած ու սեղմուած չէ միայն ճեղքման, վերացման ու լոկ հայեցողութեան վերաբերող վարդապետութեանց մէջ, այլ կը հայի նա գործնականին ալ, Եկեղեցւոյ վարչութեան կենսունակ դրութեան, անոր անյեղլի կազմակերպութեան սկզբանց, և այս է քարեկարգման ըսածնիս, յորում միայն ինչպէս ի հաւատս և ի բարոյս յԱթոռոյ կը նայ խօսիլ Քահանայապետն և խօսած է շատ առիթներու մէջ:

մէկ խօսքով բարեկարգական ըսածնիս հաւաստի եւ քառոյից նիւթէն դուրս չէ, այլ անոր մէկ մասն է և հետեւաբար անոր մէջ կը բովանդակուի ու զայն կ'ամբողջացնէ:

Այս ալ ճշգրտութեամբ հասկնալու համար և խնդիրը թեւրիմացութեանց մէջ չնետելու համար հարկ է զանազանել Բարեկարգականը երկու տեսակի. կայ բարեկարգական նիւթ որ սկզբունքի կը վերաբերի, հիմնական վարդապետութիւն մ'է Եկեղեցւոյ, որուն վրայ հետեւաբար ինչպէս տիեզերական ժողովներն նոյնպէս Քահանայապետն ՅԱԹՈՒՌՈՅ կրնան խօսիլ, վճռել և սահմանել. կան նաև բարեկարգական որսշողութիւններ կամ կարգադրութիւններ, որոնց մէջ ՅԱԹՈՒՌՈՅ չեն խօսիր ո՛չ ժողովներ ո՛չ Քահանայապետք, այլ ժամանակաց բերման ու պահանջներու համաձայն կը տրամադրեն: Պարզ օրինակներով մը բացատրենք. Բարեկարգական է ծոմապահութեան, պահոց խնդիրը. Քահանայապետն անոր մէջ երկու կերպ վճիռ կրնայ տալ. 1. վճռել Բողոքականաց դէմ, թէ՛ ծոմն ու պահքը ո՛չ միայն անարգելի ու անվայել չեն քրիստոնէին, այլ կարևոր են ապաշխարութեան ու ժամանակաւոր պատժոց քննութեան համար. այս յայտնապէս հաւատքի սկզբունք մի է և հիմնապէս բարեկարգական. 2. կրնայ որոշել, սահմանել ու կարգադրել որ այս ինչ օրը ծոմ բռնուի կամ միայն պահք պահուի. այս մասնակի կարգադրութիւն մի է, որուն տուլն ճշմարիտ քրիստոնեայն հաւատքի ներգործութիւն չպիտի ընէ, այլ միայն պիտի հնազանդի: Առաջինը մերժելով մէկ մը հաւատքի դէմ կը գործէ, երկրորդը մերժելով հնազանդութեան դէմ միայն կը մեղանչէ: Առաջնոյն մէջ Քահանայապետն յԱԹՈՒՅ կրնայ խօսիլ, երկրորդին մէջ՝ ո՛չ. թայց երկուքն ալ բարեկարգական են: Այս պատճառաւ է որ մինք դրած ենք և կը կրկնենք թէ Քահանայապետն Հռովմայ անսխալ է նաև ի բարեկարգականին՝ երբ յԱԹՈՒՅ կը խօսի, և յԱԹՈՒՅ կը խօսի, երբ այդ բարեկարգականը հաւատքի սկզբունք մ'է:

Շարունակելի

ՓՈՂ



206

ԱՌ ՆՈՐԱՆՏԻՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ

Ի ԴԻՄԱՅ ՍԱՆՈՒՆՑ Ք. ԼԵՒՈՆԵԱՆ ՀԱՅ ԴԴՐՈՅԻ

Հոռիմ 22 Հոկտեմբեր 1911

Պղնձին Հրոտիմ՝ քաղաք վրսեմ,
Ողջն ընտրեալ Մայր վրկայից .
Կեփայեան դու հաւատոյ վէմ,
Գահ անմոլար փայլիւ անբիծ :

Տեսայ ըզքիզ . . . վրսեմ պատկեր ,
Տեսայ արեամբ վարդ շիւղազանց
Ոռոգուած քու անմահ հողեր
Պերճ փառքերով ցոլայ անանց :

Եւ այդ սիրմեր արեան կարմիր ,
— Կարմիր սիրոյ բոց արծարծուն —
Ազգեր անբաւ ծընաւ , անծիր
Վառեց զաշխարհ շնորհօք հոգւոյն :

Բարեբն՝ քար տոնելթեան ,
Ծըրուէ որդիքն խառնալեզու ,
Եւ դու Հրոտիմ՝ վէմ կենսատու ,
Զուգես սիրով քչւրբ մայրական :

Եւ եօթնարփեան շնորհաց Հոգւոյն՝
Որ ցոլաց նախ ի վերնատան՝
Աւանդապահն եղած ես դու ,
Ջրանցք մ'երկնից մէջ եւ մարդկան :

Բայց ինչ այս նոր փառք , ծոցիդ մէջ վրսեմ
Նոյն հոգւոյն շնորհօք , խումբ մը լուսադէմ,
Տեսնեմ վառուած նոր բոցով սիրակէզ
Հովիւք խաչափիչ կ'եղեն յապարհէզ :

Նոյն Սուրբ վրկայից արեամբ կարմրազարդ
Կը տանին ներկուած նոր պատմութեան վարդ .
Վարդ սըրտին բոցեղ զուգած միաբան
Նըւիրեն Երկնից ի ցոյց հաշտութեան :

Տեսաւ Սուրբ Հոգին, սրբոտերն անարատ
եւ մարտիրոսաց արեան պէս առատ
Համրեց Երկրնքէն թափուած քրտինքներ,
Քրտինք լուռ վըշտաց, ջանից անձնուէր:


Եւ գոչեց. ի վեր մասի՛ք ընտրեալք.
Ձեզ ձօնէ Երկինք նոր պըսակ, նոր փառք:
Եւ սիրտք բոցաշունչ — ինչ վըսեմ վայրկեան —
Ահա նոր օծուած կ'ելլեն ի խորան:

Ո՛վ Հարք, ազնուացա՛ք Բարձրելոյն աչաց.
Ի ձեզ վէմ հաւատք տեսնէ Հայր Աստուած,
Ի ձեզ խաչանիչ կուրծք գըտնէ Որդին.
Ինչ սիրոյ տաճար կը գոչէ Հոգին:

Ոհ՛ ինչ անուշ, ոհ՛ ինչ զըւարթ
Աստիճան վեհ և սըրբարար.
Աղբիւր բարեաց բիւր և հազար:
Սիրտ իմ անկեղծ հիացած արդ
Հանդէպ փառացն այդ նորազարդ
Կ'երգէ ի սէր, հըրճուի յամայր:

Ողջո՛յն սիրոյ՝ հովիւք չըքնաղ,
Ողջոյն փառաց երջանկաւէտ.
Մինչ արդ սիրոյ Սուրբ զոհին հետ
Հաղորդակից կ'ըլլաք ուրախ,
Նոյն Ձեզ մաղթեմ յերկինս խաղաղ
Հանգչիլ դ'անմահ Գառին յաւէտ:

Գողթնունի



ԱԶԳԱՅԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՍԻՆԱՆՈՂՈՍԻ ԱՌԹԻԻ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՄԸ

Հռոմայ՝ Քրիստոնէութեան կենդրոնին մէջ, եղական արտօնութեամբ

մը տեղի պիտի ունենայ « Ազգային Կաթողիկոսական Սիւնհոգոսը » որ Կաթողիկէ Հայոցս մեռական գոհացումը պիտի տայ այժմեան հրատապ խնդիրներուն ու առեղծուածներուն :

Ըստ նշանակութեան « Ազգային Սիւնհոգոսի » , անշուշտ Գերերջանիկ Հոգեւոր Տէրն մեր և Արհիապատիւ թեմակալ Արքեպիսկոպոսունք ու Եպիսկոպոսք և Գերապատիւ վարդապետք , պիտի ջանան ըստ կարելւոյն ամէն բան մանրագնին քննութեամբ տնօրինել ըստ ներշնչման Հոգւոյն Սրբոյ , և ըստ արտօնութեան Սուրբ Գահուն ու ըստ իրենց բազմամեայ փորձառութեանց և ըստ պահանջմանց թեմերու կրօնական խնդրոց . և այս կերպով մի անգամ ընդ միշտ պիտի վերջանան խնդրոյ առարկայ եղած բոլոր վէճերն :

Ուստի պիտի ունենանք « օրինաւոր Սահմանադրութիւն » մը կամ լաւ ևս կանոնադրութիւն մը , քանի որ սահմանադրութիւնը չուզելի իր բուն բառին նշանակութեամբը ըմբռնուիլ և կը հասկցուի արդի գործելակերպով իբր « Սահման-անդրութիւն » , սահմանէն դուրս ելնելով . մինչդեռ նոյն ինքն սահմանադրութիւն բառը՝ ազատութեան , իրաւունքի , ազգայնութեան և այլ բաներուն չափաւոր « սահման » մը կը գծէ , և զեղծումը կ'արգիլէ :

Ըստ սովորութեան Սիւնհոգոսաց , ամէն բան նկատուութեան կ'առնուի . անտարակոյս առաջին տեղին գրաւոզ և պատուականագոյն խնդիրներէն մին ալ Ծիսական , Արարողական ու Բարեկարգականն պիտի ըլլայ , որոյ մասին կ'արժէ խորհրդածութիւն մ'ընել : Բայց , որպէս զի յստակ գաղափար մ'ունենանք , գիտել կուտանք թէ՛ Ս . Եկեղեցին իր եռամասնեայ միութեամբը կը բաղկանայ Պատերազմող , Վշտակիր և Յաղթական մասերէ , որոց վերջին երկուքը , առ Աստուած փոխուողներուն և առաջինը՝ աշխարհիա վրայ կեանքի և մահուան ասպարիզին մէջ պայքար մղողներուն , այսինքն կենդանի եղողներու է , և այս ունի իր մէջ բաներ՝ որոնք անփոփոխ են . ինչպէս Ս . Հաւատոյ մասերն ու Ս . խորհուրդները . բայց կան բաներ ալ՝ որոնք ըստ պատշաճի կրնան փոփոխութիւն և բարեկարգութիւն կրել , և են Ծիսական ու Արարողական և Բարեկարգականները :

Մեր Ըսածները կը հաստատեն հետագայ տողերն :

Եկեղեցին երկու կերպով կը յառաջագիմէ , նախ ի բարեկարգութեան զոր կը յարմարցնէ ժամանակներու պիտոյից . երկրորդ իւր Վարդապետութեան մէջ որ կը լուսաւորուի , ու կը ճշդուի : Բարեկարգութիւնն է մարմի-

նը որ կ'այլափոխի. Վարդապետութիւնն է հոգին որ չ'այլափոխիր, բայց լուսոյ մէջ մեծվայելութիւն կ'ստանայ (Ս. Փրանկ. Սալեգ.)⁽¹⁾

Արդ՝ գալով գործնականին, երկու հակոտնեայ ծայրայեղութեանց ականատես ըլլալու դժբախտութիւնն ունինք նոյն իսկ ընդհանուր Հայութեան մէջ. այսինքն, մեր համազգային երկու հատուածներուն՝ էջմիածնական և բողոքական Հայոց և Կաթողիկէ Հայոց մէջ: Առաջինները (էջմիածնականք), առ. երեւոյթս, իբր կրօնասիրական իրկիւղածութիւն և հնապաշտութիւն՝ ամէն կրօնական և ծիսական ու բարեկարգական բանի անխտրաբար վերջակէտը դրուած կը համարին և անգլխօրէն նշանախեց մ'իսկ փոխել չեն ուզեր. թէպէտև այժմ հակառակ իր այս դրութեանը՝ ամէն ծայրայեղ նորակրօնութիւն մուտ կը գտնէ անզգալարար և անտարբերութեամբ:

Իսկ Բողոքական Հայք, ընդհակառակն ամէն բան անխտիր և ծայրայեղ կերպով նորոգելու և տակն ու վրայ ընելու ձգտած և յաջողած են իրենց մէջ:

Կաթողիկէ Հայք ունեցած են իրենց երբեմնակի ձգտումները՝ որոնք երկու դասակարգի կրնանք վերածել. մէկ մը խղճահար և երկրորդն բարեխառն կամ միջին: Առաջինն ժամանակ մը յուստեստութեամբ ամէն ինչ որ հայկական է, կոտորածի, անճիշդ և բարեփոխելի նկատելով՝ ձեռնամուխ եղած է սրբազրութեանց և ըստ ամենայնի ուրիշի յար և նման ձեւերու մինչև իսկ հայերէն լեզուն ու ոճը, որոյ տխուր հետեանքը՝ խոհուն և անկեղծ անձանց շատերուն մղում տուած է անկողմնակալ ոգով որոշելու ճիշդն անճիշդէն և հարազատը անհարազատէն և ին. և ին. որոյ գրութիւն գործոցն կրնայ նկատուիլ վերջին 1890 ին Քաղկեդոնի Կաթողիկէ Հայոց Սիւնհոգոսի գործքերը:

(1) « L'Eglise progresse de deux façons, en sa discipline qu'elle adapte aux nécessités des temps, en son dogme qui s'éclaircit et se précise.

La discipline, c'est le corps qui se transforme;

Le dogme, c'est l'âme qui ne se transforme pas mais qui s'agrandit dans la lumière. »

(S. Fr. de Sales).

Երկրորդն կ'ստորաբաժնուի հնաւանդ պահպանողականներու և բնականարգասէրներու կրկնակ խմբերու: Երրորդ հասկերները առ հայկական չի, ուրեմն պէտք չի ընդունիլ մեր ծիսին ու արարողութեան մեջ, ըսելով՝ կ'ուզեն զուտ պահել ըստ էջմիածնականաց ամէն արարողական ու ծիսական բան՝ ի բոց առեալ Հաւատոյ մասի բաներն: Սակայն, անդին աւելի խոհուն մտքեր և Ս. Եկեղեցւոյ վերոյգրեալ կենդանեաց պատկանող մասին ոգւոյն ու կամեց համաձայն բարեկարգութեան փափաքողք, կ'ուզեն ու կ'ընդունին ծիսական և արարողական ու բարեկարգական լաւութիւններ, ինչպէս ըրած են մեր նախնիք. օտար ուղղերու և այլո՞ծէս Եկեղեցեաց քով ինչ սղէկ բան որ գտած են, զայն իւրացուցած են հայացնելով ըստ ծիսի և արարողութեան Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ:

Ոչ նուազ հետաքրքրական են նաև հետագայ խնդիրներն զորո՞ւ Սիւն-հոգոսը նկատողութեան պիտի առնու, ինչպէս որ ըրած է Քաղկեդոնի վերև յիշատակած Ժողովն, թէ՛ ըստ ոչ միայն Հայկական՝ այլ ընդհանուր Եկեղեցւոյ սովորութեան, ամէն ռեզամ որ Եկեղեցական խորհուրդ մը և մանաւանդ Ս. Պատարագն ու Ժամերգութիւնք կը կատարուին, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ամբողջ տնօրինական խորհուրդները կը յիշատակուին կամ քացայայտ և կամ շեշտայն և այսպէս ամբողջութիւն մը կազմուելով, շատ անգամ, արդէն կատարուածներն ու կատարուելիքներն խառն կը յիշուին. բաւական է մտաբերել նախատօնակները, ճրագաւորները, և Ս. Պատարագի ստեն՝ ներկայ և ապառնի բառերու վործածութիւնները. նոյնպէս Ժամերգութեանց մէջ Շարականաց քաղուածոյքը, որոց մէջ ամբողջ տնօրինութեանց յիշատակութիւնք կ'ըլլան ամէն օր, հակառակ այնպիսեաց առարկութեանց թէ « Հայկական ծէսն չունի ջերմեռանդական բաներ Լատինաց պէս »: Այլ ևս ի՞նչ կ'ուզենք քանի որ ամէն օր Աւետման և միշտ Ս. Աստուածածնի, Ծննդեան և հետեւաբար Յիսուս Մանկան, Յարութեան, Համբարձման, Հոգւոյն Սրբոյ Գալտեան, Խաչի (չարչարանոց ևս ճանապարհ խաչի եթէ կուզես), Եկեղեցւոյ և Սրբոց ու Հրեշտակաց յիշատակութիւնք կ'ըլլան, թողլով ուրիշ մանրամասնութիւնքն և մանաւանդ ննջեցեալներու (քաւարանցոց) յիշատակութիւն չարունակ:

Ահա պայծառ, խնդիր չվերցնող իրողութիւն մը: Ոմանք չալ կ'առարկին Ժամերգութեանց և ըն, Երկարութիւնն. խի՞ստ բարի: Սիւնհոգոսն այդ ալ կը մտածէ, չէ՛ թէ յապտելով, այլ կրկնումները բարբառով վեր-

ցընելով, որոնք խիստ շատ են ստղմասոց մէջ մանաւանդ . մնացածներն ըստ պատշաճի և ըստ օրինաց :

Ահա սոյն անորոշ և թիւրիմաց ընթացքէն ծագումն առած են կարգ մը զանազանութիւններ . ծիսական, արարողական և ջերմեռանդական բաներ, (1) սովորութիւնք ու ձևեր, որոնցմով մեր անկանոն ու անհաստատ վիճակը ցոյց կուտանք, և այլոց առջև մեղադրելի կը գտնանք : Այս ծիսական ու արարողական հանգամանքին նման յեղյեղուկ կերպարանք ու ընթացք ցոյց կուտանք նաև քաղաքականին մէջ, մեր գործին եկածն ընդունելով, իսկ չեկածը մերժելով՝ առանց նկատելու անոնց ո՛ւրիշ գալը, որով կը յանգինք ներկայ ողբալի եզրակացութեան :

Անշուշտ ըստ փափագանաց Սրբազան Տեառն Մերոյ Պիոսի Ժ. Քահանայապետին և ըստ Անոր նամակին՝ զոր ուղղած է մօտակայ Սիւնհոգոսի առթիւ՝ առ Գերերջանիկ Կաթողիկոսն և առ Համօրէն Եպիսկոպոսունս Կաթողիկէ Հայոց, պիտի ջանայ ոգի ի բռն՝ Հռովմ կազմուելիք Սիւնհոգոսն կարգադրելու մի անգամ ընդ միշտ ամէն բան ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ և յօգուտ հոգւոց և ի պարծանս Ազգիս :

Այսպիսի ուխտիւք և ըղձիւք կ'աղօթէ վասն յաջող ելլից իրաց :

Ք .

(1) Բարեպաշտական ու ջերմեռանդական բաները պէտք չէ շփոթել Ծիսի ու Արարողութեան հետ, որոնք իրենց յատուկ բնորոշն ու սահմաններն և յատկութիւնքն ունին ամէն Գրիստոնեայ աղգաց մէջ . և ջերմեռանդականք արտօնաբար (facultatives) կը գործածուին, մին միւսէն փոխ առնելով իր չունեցածը, կամ վասն առաւել ջերմեռանդութեան որ արգելուած չէ :

Տիգրանակերտի Վիճակաւոր Արհի . Անդրէաս Եպ. Չէլէպեան երէկ Հռովմ հասաւ :

Փ . Պիանֆի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պօլիէի Յիշատակարանը	էջ 253
Քահանայապետի Անսխալութիւն և Բարեկարգութիւն	» 256
Զօն առ Նորընտիր Եպիսկոպոսունս	» 259
Կաթողիկոսական Սիւնհոգոսի առթիւ - Խորհրդածութիւն մը	» 260



ROMA — PIAZZA CAMPO MARZIO, 6 — ROMA

ՔԱՐՏԻԻ ԵՂՔԱՐՏԻ

Pontificia Fabbrica di Candele da Chiesa e Lumini da notte senza olio.

Candele speciali per la esportazione

Fornitori dell'Arcibasilica Lateranense, della Basilica Vaticana e di tutte le altre principali Basiliche e Chiese di Roma e d'Italia.

Esportazione in tutti i principali porti del mondo dove la Ditta spedisce la merce franca d'ogni spesa.

E' il più grandioso stabilimento che siasi dedicato esclusivamente alla fabbricazione di Candele per il culto.

* Քահանայապետական Գործարան
* Մամեղինաց ի պէտս եկեղեցեաց կը
* պատրաստուին կանթեղք դիշերոյ ա-
* ռանց իւրի կը շինուին յատուկ մոմե-
* ղէնք արտածութեան համար.
* Հայկաթիչք Լատերանեան աւագ
* Մայր եկեղեցւոյ և Վատիկանեան Մայր
* եկեղեցւոյ.
* յիտալիա և ի Հռոմ գտնուած միւս
* բոլոր աւագ և գլխաւոր եկեղեցեաց
* Ընկերութիւնս աշխարհիս ամէն գըլ-
* խաւոր նաւահանգիստներուն անդամք
* կը զրկէ՝ ծախքն իր վրայ. Յմենագնծ
* գործարանն է, որ միայն ի պէտս ե-
* կեղեցւոյ մոմեղինաց շինութեան կը
* պարապի:



OTTICO

ROMA — CORSO UMBERTO I, 412 (Palazzo Fiano) — ROMA

ՓՐԱՆԿԻՍԿԱՆ ՔՐԻՕՏԻՐԻ

Grand assortiment en jumelles pour theatre, campagne et marine.

Jumelles prismatiques de la maison Zeiss.

Verres cylindriques, prismatiques et combinés.

On exécute toutes sortes d'ordonnances des MM. les Professeurs oculistes.

* կը վաճառէ աժան գնով ամէն տե-
* սակ գիտական թնտրանի, գաշաի և
* ծովու համար
* Ունի երկաթեայ դիտակք հատուա-
* ծակողմ ապակիով Ծախ Գործարանէն
* և Ապակիներ գլանացեւ, հատուածա-
* կողմ և զուգեակք.
* կը կատարուին ամենայն ճշտու-
* թեամբ որ և է յանձնարարութիւնք
* ՊՊ. անարուժից.

